

109. Էջ 123. տող 1. « Իբրեւ ոչ ինչ
հնարս մեքենայից ... և երբ ոչ ինչ գտա-
նէին »: — Ուղղ. « և իբրեւ ոչինչ գտա-
նէին »: Նախընթաց պարբերութեան ձեռով
խօսքը կը շարունակէ իրրեւով. — երբ
հնար չեն գտնար, սպաւ դրան երեցուն կը
դիմեն . . .

110. Էջ 123. տող 6... « Ապա դրան
երեց ոմն ... Մըջունիկ ... զնա ի բաւոտ
արկանէր փառանձնի մտորէն »: — Ուղղ.
« ի բուն տրիսներ »: Ոչ. թունաւորելու
համար չանարժան ճահնային բաւոտ չէր
դնէր փառանձնի, այլ պէտք է համոզէր,
կաշառէր, բանասարկութիւն անէր, բան մը
խոստանար որպէս զի անորէն զործը կա-
տարէր »:

111. Էջ 124. տող 4... « զարեւոյ
ասպատանին »: — Ուղղելի « զարեւոտ-
կոյ »? Արշակի համար Բուզանդ կ'աւէ
որ զնաց զարբունի ձիանոցն տեսնելու,
հոն ախոռապետն կ'անպատուէ և վասա-
կէն կը սպանուի. (անդ տող 29). ուստի
տարեկան եթէ աղաւաղ բառ չէ, ուրեմն
« ախոռապետ » կը նշանակէ և որպէս ...

112. Էջ 124. տող 33. « Ոչ ինչ առ
յուս կալեալ »: — Ուղղ. « առ յուս կա-
լեալ », բանի տեղ չգնեցով:

113. Էջ 128. տող ... Իբրեւ տեսին
զգունդն թէ վասակ է ... զխորանն ի ձոր
յունը բերդին . . . : Եւ ոչ ոք տայր
ժամանել յառնել, զի անդէն ի կողի սպա-
նանէին զնա »: — Ուղղ. ի ձորի? Վար-
դան իջեր էր ձորը և հոն վրայ կը հաս-
նի վասակ և ժամանակ չեն տար որ ել-
լայ փախչի. այլ անդէն կը սպանանեն...
Ի նմին ձորի՞ թէ բլրի կողմն ի վեր փա-
խած ժամանակ:

Հ. ԳԱՐԻԲԵՆ ՆԱԼԱԳԻՏԵԱՆ

Շարայարելի

1. Փաւստոսի ուղղագրիչը իրեն բնագիր ունեցած է
1882ի Բուզանդը. 1889ի տղազրութեան մէջ կատա-
րուած է իր առաջարկած սրբագրութիւնը: Ընդհակա-
ռակն աղաւթ Թողուած է մեն սխալը՝ զոր ուղղագրիչը
կը ժամանելէ 112րդդ գիտողութեամբ: Խ.

ԱՆՏԻՊ ԷԶԵՐ

Պատումիկ մը Շապուհ Բագրատունւոյ
պատումութենէն.


Շապուհ Բագրատունի, որդի Աշոտ Անթիպատրիկի,
կ'ապրէր Թ գարու մէջ. իր պատմութիւնը, զոր այնքան
յաճախ կը յիշատակեն միջնադարեան հայ հեղինակներ,
այժմ կորուսած է. ընդհանրապէս կը զովաբանուի՝ իբրեւ
առաջին աշխարհաբար գրող, ըստ որում Յովնան կա-
թողիկոս կ'ըսէ իրեն համար. « գեղջուկ բամբի բաւա-
կան թեզ տայ պատեալս տեղեկութեան »: Հետագայ
պատմութիւնը ճշդագոյն զաղափար մը կու տայ իր ոճոյն
և իր լեզուին: Ս. Ղազարու խմբագիրը հաւաքածոյ-
քին մէջ (ԻՍ, 6) կայ նաեւ ուրիշ հատուած մը, ենթա-
դրութեամբ իրեն ընծայուած և համապատասխանող Հ.
Ջարրհանաւանի (Հայկ. Հին Դար. էջ 485) ի մէջ բե-
րած սա յիշատակարանին. « Շապուհ պատմութիւն. որ
է գեր սրբոյն Սմբատայ տարառեկատիկ և այլ տուր
նահատակացն, Թուին Հայոց ԲՅ »: Հ. Ջարրհանաւան
կ'ըսէ. « Յանուն Շապուհ Բագրատունւոյ՝ պահոց մըայ
գրուած մը կայ, որ անշուշտ ուրիշ համանուն անձի մը
երկարարութիւն է »: Հետեւեալ պատմութիւն զոր կը հրա-
տարակենք՝ յիշուի պահոց մըայ կը խօսի, ու վերջ
դրուած յիշատակարանը ցոյց կու տայ թէ ան Շապուհ
պատմութենէն առնուած է. այսու կ'ապացուցուի՝ թէ Հ.
Ջարրհանաւանի տարակոյցը պահոց մըայ տեղեկա-
կանութեան մասին՝ ղեռ չիմաստը չէ:

Շապուհ Բագրատունւոյ մասին պատմագրաց աւան-
դած տեղեկութիւնները տե՛ս Հ. Ջարրհանաւանի քով
(էջ 484), իսկ իր անուամբ մեզ հասած երկու պատա-
ռիկներու մասին՝ կը պատաստուի առանձին քննութիւն
մը՝ Հ. Բարսեղ Վ. Սարգսեանմէջ. Խ.

« Ի Շապուհ պատմութենէն.

Այլ քանզի ստուկանեաց նախահայրն, յեր-
կիր դարձաւ ուստի առան. բայց այսպիսի ինչ
առ մեզ կրի ողորմելի և արտասուաց արժանի
գործք, որք հմուտք և տեղեկք եմք յառաջա-
գոյն խորատուցն և ոչ զգուշանմք և զայս՝ ոչ
զմեծ և զանտանելի ինչ զօրինադրութեանց ա-
սեմ որ ըստ աւետարանական հրամանացն, այլ
զփոքու և սակաւժամանակեայ, որք ի սրբոց
առաքելոցն աւանդեցաւ, և մեծ տիւնհոգոսական
ժողովոյն Նիկիայ սահմանեցան տիեզերական
ուղղափառ հայրապետացն կանոնացն եղաւ հաս-
տատութեամբ յաղագս սրբոց քառասներորդացն
պահոց. զի ի վրոխ հանելով հաղորդք լինի-
ցիմք չարարանացն Քրիստոսի, և նորին մեռե-
լութեան կցորդք և թաղմանն հաւատարեալք և
ընդ նմին կինադորձեալ յարութեամբն յաղագս
չարութեան մաքրելոյ և առհաւատեցայ կենացն
ժառանգորդ լինիցիմք ուխտադրուծ լեալ ապա-

կանեմք զօրութիւն պահօցն, զկնի որովայնի մօլիմք: Զամենայն շունչ ղօղական ազգին յաճախապէս ճաշակելով, ըմպելով, և պէտպէս զեռնով որ ի ծովէ, արտաք խլապին, մինչև բազումք զծայթքեալն հանդերձ այլովք արտադուր թեամք զործնն: Իսկ այլք զհինգ աւուրսն սրբութեամբ անցուցեալ պատճառելով զվկայիցն յիշատակս և յարութեան պաշտօնն, համարձակութեամբ հաղորդին անխորի յամենայն կերպակուրս: Բաց ի մարմնական մտակերութենէն արշուրթեամբ շուայտեալք պիղծ երգովք և սատանայական յօրինեալ ձայնիւք հեթանոսաբար ապականեն զհինգ աւուրցն զճանութիւնս. և այլք ի ճոխագունիցն ամենայն օր իւղիւ և մեղու պարարեալ զփափագ որկորստութեան անցուցանեն, և երգովք լկտիւք մոլին. և այսպէս զփրկութիւն անձանց կորուսեալ՝ լուծանեն զկարգ գոգելի ընդդիմադրեալք հարցն աւանդութեան: Այս ի պատմութենէ Հապհոյ Բագրատունւոյ է որդւոյ Աշոտի սեպուհի պատրիկի, յանուն Դաւթի Բագրատունւոյ որդւոյ Աշոտի իշխանաց իշխանի զոր ձեռնառեալ և ընկալեալ յօժարութեամբ հօր Դաւթի առաջնորդի վանաց սրբոյն Ստեփաննոսի՝ ի Բագրեւանդ գաւառի, և յոյժ բերկրեալ յաղագս հեղի գոլոյ ի ստութենէ, և զի ճշմարտութեամբ՝ յաւել յինքնէ զճառս բանից աստուածայնոց »:



ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

Վ Բ Ա Ց

Հայրենագիտական շարժումը հազիւ իր գոյութիւնը կը զգացնէ այս տարեշրջանին մէջ, ուր ազգը շատ աւելի հզօր պատճառներ ունի իր ապագայովն զբաղելու, քան իր անցեալովը: Հազիւ մի քանի յօդուածներ կարող պիտի ըլլանք արձանագրել:

« Եղայ » հանդէսին մէջ (1906, թիւ 6) Սիւն վարդապետ յօդուած մը կը նուիրէ « Մովսէս Խորենացի թէ Մովսէս Խորին » վերնագրով: Բօղոածագիրը աւելի քաշարտութիւն ցոյց կու տայ քան հմտութիւն, և անշուշտ այսպիսի պարագայներու մէջ առաջինը չէ որ կը պահանջուի:

Նա կը համարի թէ վենետիկի միաբանութիւնը Մովսէսի ընծայած ըլլայ խո-

րեւացի մակդիրը: « Երեւի Եզնիկի և Ղազարի իրենց ծննդավայր գիւղերի անունով կոչուած լինելու նախանձը շարժել է մեր վենետիկցի եղբայրներին հետաքրքրութիւնը, թէ ինչու Եզնիկը կողարացի կը լինի, Ղազարը Փարպեցի, իսկ Մովսէսը չլինի ո՛ր և է տեղացի »:

Այս հաճելի պարբերութենէն յետոյ՝ յօդուածագիրը կը հարցնէ. « Ի՞նչ յայտնի չէ որ մեր բարձր ի գլուխ կանգնած մատենագիր սուրբ հայերը սովորաբար չեն յիշատակում իրանց ծննդավայր գիւղի կամ քաղաքի անունով, այլ իւրաքանչիւրն՝ իր յատուկ արժանատրութեան »: Ուստի, կը պատճառարանէ Սիւն վարդապետ, այն պատճառաւ՝ որով Ս. Գրիգոր՝ Լուսաւորէի կոչուեցաւ, Մեսրոբը՝ Մոշտոց, Դաւիթը՝ Անյաղթ, Մովսէսն ալ՝ Խորին կոչուեցաւ:

Յոյց տալու համար թէ Մովսէս չէ « լինել Մշոյ գաւառի Խորնի կամ Խորոնք գիւղում », նա դիտել կու տայ՝ որ Խորենացի վան չէ գացեր, որովհետեւ տեղ մը կ'ընէ. « Ի պատահաւս նոյն ամբարտակի գետոյն, այժմ, որպէս յեմք, մարդիկ աշխարհին ի հէն և ի գաղթական փախստեամբ ամբանան »: Անշուշտ կ'ընէ, Սիւն վարդապետ, Մովսէս և Երեսնամենի արկածալի պանդխտութիւնից վերադարձին, գոնէ կարիք կամ իսկապէս կարօտ և փափագ կը զգար այցելելու իւր հայրենիքին, Մուշին, և ոչ նրանից այնչափ հեռու գտնուած՝ հրաշակերտ վանին »: և որովհետեւ այստեղ չէ քացած, — կը հետեցնէ Սիւն վարդապետ, — Մովսէս Խորնի չէ ծնած: Ամբողջ պատճառաբանութիւնը խախտու է և անհիմն, ձեռագրաց վկայութիւնը քնաւ չէ առնուած ի նկատի, միամտօրէն Միւլիթարեանց ընծայուած է ինչ որ անոնք ժառանգած են միայն, ու վերջապէս հակասութեան մէջ է Սիւն վարդապետ՝ տեղական մակդիրի գոյութիւնը մերժելով՝ յետ կողարացիին ու փարպեցիին վրայ խօսելու: Գննութիւնը պիտի շարունակուի. դեռ ժամանակ կայ ուրեմն յօդուածագիրն՝ այս կէտերուն մեկ-